ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

Funded by the European Union

MEDIA INITIATIVES CENTER

YEREVAN PRESS CLUB

IMS
GOOD JOURNALISM | BETTER SOCIETIES

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ - 2026

2026թ. ՀՈՒԼԻՍԻ 18-ին՝ Երևանի մամուլի ակումբի հիմնադրման 31-ամյակի օրը մայրաքաղաքի «Իբիս Երևան Կենտրոն» հյուրանոցում տեղի ունեցավ «Մեդիայի որակի և դիմակայունության նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում սահմանված Էթիկական լրագրության մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությունը:

Էթիկական լրագրության մրցանակի նպատակն է խրախուսել հայաստանյան լրատվամիջոցներում էթիկական լրագրության հետագա զարգացումը, մասնագիտական էթիկայի համընդհանուր կանոնների, Հայաստանի լրագրողների եւ լրատվամիջոցների էթիկական սկզբունքների կանոնագրի դրույթների հետևողական պահպանումը:

ԵՄԱ՝ Էթիկական լրագրության 2025-2026թթ. մրցանակակիրները

ԵՄԱ մրցանակ

Գայանե ԽԱՉԱՏՐՅԱՆ, Factor TV-ի լրագրող: Մրցանակը հանձնեց Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Հեսսը:

ԵՄԱ մրցանակ

Հարություն ՄԱՆՍՈՒՐՅԱՆ, «Հետք մեդիա գործարան» ծրագրի ղեկավար: Մրցանակը հանձնեց ԵՄԱ փոխնախագահ Սեդա Շիգանյանը:

ԵՄԱ մրցանակ

Սուրեն ԴԵՀԵՐՅԱՆ, «Ամփոփ Մեդիայի» հիմնադիր խմբագիր: Մրցանակը հանձնեց ԵՄԱ գործադիր տնօրեն Արմենուհի Սուքիասյանը:

ԵՄԱ մրցանակ

Հայկ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության մեկնաբան: Մրցանակը հանձնեց Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն Նունե Սարգսյանը:

Միջոցառումը կազմակերպվել է «Մեդիայի որակի և դիմակայունության նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը՝ Երևանի մամուլի ակումբի, Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի, «Միջազգային մեդիա աջակցություն» (IMS) կազմակերպության հետ համատեղ՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ: